№ 225 ԿԻՐԱԿԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15

1906

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԿԻՐԱԿԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15 № 225

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». Базарная ул. д. Тамамшева № 16. Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և ազգ օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն տեղում.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կօպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ

ՄՇԱԿ

Լրագիրը արժէ 3 ռուբլի։ Մի ամսվանը 1 ռուբլի։

ԾՏԱՊԵՑԷՔ ՕԳՆԵԼ

Թիֆլիսի Կենտրոնական Նպաստամատոյց Ցանձնաժողովը յայտարարում է, որ արդէն ստացված է «ԳԵՂՈՒՆԻՆ»։ Առ այժմ ստացված են 300 օրինակ։ Բոլոր 1000 օրինակներից գոյացած արդիւնքը յատկացրված է յօգուտ հայ տառապեալներին։ Ցանկացողները՝ ստանալ այդ պատկերազարդ և շքեղ հատորը, որ գնահատելի մեծ հաճոյք է պատճառում, թող շտապեն՝ ուղարկելով գինը 4 ր. և ճանապարհածախքի համար 40 կ., ընդամենը 4 ր. 40 կ., դիմելով կամ «Մշակի» խմբագրատունը, Ցանձնաժողովի անդամ-քարտուղար պ. Հ. Առաքելեանին, կամ «Գուտենբերգ» գրավաճառները։

առ 1—5

ԱՐՏԻՍՏԻԿ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

Ցերեկը

ԿԻՐԱԿԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ,

ՀԱՅ ԴՐԱՄԱՏԻԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ

ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԻ

ԹԱԳԻ ՀԱՄԱՐ

Ողբերգութիւն 5 արար., Ֆր. Կոպպէի, թարգ. Մ. Մանուչար։ Սկիզբը ցերեկվայ ժամը հիշա 12-ին։ Տեղերի գները էժանացրած են։ Վարչութեան հերթապահ անդամ Գ. Յուրինեան

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԹԱՏՐՕՆՈՒՄ

Կիրակի, հոկտեմբերի 15-ին,

ԽԱՐԴԱԽԱՆՔ ԵՒ ՍԷՐ

Ողբերգութիւն 5 արար. և 7 պատկ., Շիլլերի, թարգ. Շերվանզադէ։ Սկիզբը 8 երեկոյեան ժամը հիշս 8-ին։ Տեղերի գները 1 ր. 20 կօպէկից մինչև 20 կ.։ Վարչութեան հերթապահ անդամ Հ. Առաքելեան

ԱՐՏԻՍՏԻԿ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆՈՒՄ

Երկուշաբթի, հոկտեմբերի 16-ին,

Առաջին անգամ

ՈՒԺԵՂՆԵՐ ԵՒ ԹՈՅԼԵՐ

Դրամա 4 արար., Տիմկովսկու, թարգ. Խաժակ։ Սկիզբը երեկոյեան ժամը ճիշտ 8-ին։ Տեղերի գները անցեալ տարվանն են։

2—2 առ. Ռէժիսսեօր՝ Ց. ԱԲԵԼԵԱՆ

ՇՈՒԼԱԻԷՐԻ

բուժարանի համար

ՀԱՐԿԱՒՈՐ Է

ԲԺԻՇԿ ԵՒ ՖԵԼԴՇԵՐ

հայերէն կամ Թուրքերէն լաւ գիտցող. Ֆելդշերը պէտք է դեղեր պատրաստելու փորձառութիւն ունենայ։

Ցանկացողները պիտի դիմեն՝ Шулаверь старшинѣ Караханянцу.

առ. 2—3

ՀԱՒԼԱԲԱՐ

ԲԺԻՇԿ

Ա. Ա. ՄՕՆՍԷ

Ընդունում է 12—1 ժամը, երեխայական և ներքին հիւանդութիւններ ունեցողներին։ Махатская ул. № 2. (Բօզօվայա հրապարակին կից)։ առ. 3—10

ՊԱՆՍԻՕՆ

Վ. Ա. ԳՐԻՆԵՕՎԱՑԻ

(Դրժեվիցէ—Կովվաչ)

Գոյութիւն ունի 22 տարի

Պատրաստվում են 2 սեռի մանուկներ բոլոր միջնակարգ դպրոցների համար մինչև 4-րդ դաս. առարկաներից և նոր լեզուներից։ Մուզիկայի դասեր՝ սկսողների համար։ Գարերը աւանդում է պ. Ինոչէնցին։ Դուիդովսկի փող. № 3. Ձմեռային կրուժօկի դիմաց։

առ 3—3

Ա. ՄԵԼԻՔ-ԱԼԱՀՎԵՐԴԵԱՆ

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ և ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ

առարկաների դասեր։

առ. Межевая, 2. 19—20

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԻԶ

և

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Վ. Ս. ԶՄՇԿԵԱՆԻ

Մնում է իր հին քնակարանում Архивный переулокъ, Ցակոբեանի տուն № 22։ Ընդունում է երկու սեռի երեխաների 4 տարեկան հասակից և պատրաստում միջնակարգ դպրոցների փոքր դասարանների համար։

առ. (Ե. Հ. Կ.) 7—10

Պատիւ ունեմ յայտնելու Թիֆլիսի յարգոյ հասարակութեան, որ կարճ միջոցով մնում եմ Թիֆլիս քաղաքում, «Վերսալ» հիւրանոցում, Վօրոնցօվի արձանի մօտ, համար 4 և 5։

ԵԻՐՕՄԱՆՏԻԿ

Տիկին Անաստասիա Իւրիեվնա ԿՕՍՏԱՆՏԻՆԻՆ

Գուշակում է ձեռքի ափի գծերով մարդուս բախտաւորութիւնը և նոյնպէս գուշակում է անսխալ կերպով մարդուս անցեալը, ներկան և ապագան։ Հաչակաւոր ընդունելութիւն է գտել արտասահմանի և Ռուսաստանի զանազան մեծ քաղաքներում։ Ընդունում է ամեն օր, առաւօտեան ժամի 9-ից մինչև 1-ը և 3-ից մինչև 6-ը։ Մէանսի վճարը 1 ր. այցելողից, իսկ ուսանողներից 50 կօպէկ։

առ. (Կ.Ե.) 1—2

ԲԺԻՇԿ

Յ. ԳԱՐԱՆՖԻԼԵԱՆԸ

Վիեննայում ընդունում է արտասահմանից եկած հիւանդներ, կազմում է խորհուրդներ տեղական պրոֆեսորների հետ։ D-r Caranfilian VII Mechita ristengasse 4. Wien

առ. Կ. Չ. 1—2

ՌՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատասխանատուութեան հարցը. Վերջին տեղեկութիւններ. Կուսակցութիւնների շուրջը. Սխալվում էք ժողովրդական իրաւունքը. Բժշկական հարցը գաւառում. Տեղեկութիւններ գաւառից. Ֆրանսիայի Ուլարը Թիֆլիսում. Կովկասեան Փոխարքայութիւնը. Դիւզատնտէսական դպրոցների կարևորութիւնը մեզանում. Թատրոն. Ախալցխայի ոպերացները. Բռնութեան աշխարհից Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՐՑը

I

Ի՞նչ վնաս կը լինի, եթէ մի մեծ կազմակերպութեան մէջ լինեն զանազան դաւանանքների և տակտիկայի հետևող մարդիկ։ Ինչո՞ւ միասին, անբաժան միմեանցից, ընդհանուր այժերով և զէնքերով չը գործեն ազատամիտներ, սոցիալիստներ ու պահպանողականներ, յեղափոխականներ ու ոչ-յեղափոխականներ։

Այդ հարցերը կարող են տալ մեզ այն մարդիկ, որոնց հայեցակէտերի առիթով մենք խօսեցինք մեր վերջին յօդուածներում։

Արդարև, ի՞նչ վնաս կարող է լինել լինել քաղաքի ազգաբնակութեան համար, եթէ մէկը բանայ մի մեծ խանութ, մի ընդարձակ մագազին, որի մէջ ծախվեն օրինակ՝ գեղեցիկ ու նուրբ կերպասներ և հասարակ կտաւ, մեղր, ամանեղէններ և կուպր, փայտեայ, երկաթեայ և հողի կերտուածներ, հացի ամեն տեսակ պաշարներ և նրանց հետ միասին վառօդ, սարքանակ, հրացան և այլն և այլն։

Ի՞նչ վնաս դրանից։

Անկասկած, ոչ մի վնաս։ Խանութը կը լինի օգտակար մեծ խանութ, որ կը ծառայէ ազգաբնակութեան բազմատեսակ պահանջների բաւարարութիւն տալուն։

II

Վնաս չի լինի, եթէ կազմվի նոյնպէս մի մեծ հիմնարկութիւն, որը կարողանայ և դպրոցներ բանալ, և արհեստ սովորեցնել, և ժողովրդին հայ մատակարարել, և գիտական ուսումնասիրութիւններ կատարել, և գիտնականներին օժանդակութիւն հայթայթել, և հնութեան յիշատակներ պահպանել, և զանազան տեսակ մրցանակներ հիմնել։

Անկասկած, այդտեղ վնաս չէ կարող լինել, այլ միայն օգուտ։ Շատ շատ՝ կարող է հարց ծագել այն բանի մասին, թէ արդեօք միացնելով այդքան նպատակներ միասին, չի՞ ծանրանայ հիմնարկութեան գործը։ Բայց եթէ ենթադրենք, որ հիմնարկութիւնը ունի մեծ դրամագլուխներ և իւրաքանչիւր գործի համար կան առանձին հոգատար մարմիններ և յանձնաժողովներ, այն ժամանակ այդ առարկութիւնն էլ կը կորցնէ իր նշանակութիւնը։

Ցամենայն դէպս, այդպիսի հիմնարկութեան քննադատները կարող են խօսել միայն այն տեխնիկական դժուարութիւնների մասին, որոնք այս ու այն պատճառով արդէք զը դասդ[illegible] նարկութեան բեղմնաւոր գործունէութեան համար։

III

Եթէ այդ օրինակներից յետոյ անցնենք հասարակական և քաղաքական կազմակերպութիւններին, կը տեսնենք, որ կան գործեր, որոնք արդարև կարող են շաղկապվել մի կազմակերպութեան կամ կուսակցութեան մէջ, բայց կան բաներ, որոնք ոչ մի կերպ չեն կարող միասին հաշտվել։

Այդ մէկ։

Իսկ երկրորդ, քաղաքական կազմակերպութիւնների մէջ յայտնի դեր է կատարում և պատասխանատուութեան հարցը։

Եւ դա շատ կարևոր հանգամանք է պատմական որոշ շրջաններում։

Իւրաքանչիւր մարդ, որ մտնում է մի կազմակերպութեան մէջ, հաշուի է առնում այն բոլոր դրական և բացասական հետևանքները, որոնք կարող են առաջ գալ այդ կազմակերպութեան գործունէութիւնից ժողովրդական կեանքի և կազմակերպութեան մասնակիցների համար։

Զանազան նկատումների համագումարը վերջնականապէս վճռում է մտնել թէ չը մտնել որոշ կազմակերպութեան մէջ։

IV

Եթէ ինքնապաշտպանութեան կազմակերպութիւնը կարողանում է միացնել մի ազգի բոլոր անդամներին, դա նշանակում է, որ ինքնապաշտպանութեան դաղափարի համար այդ ազգը ընդունում է և այն ծանր պատասխանատուութիւնը, որ կապված է ինքնապաշտպանութեան դաղափարի իրագործութեան հետ։

Այդ կազմակերպութեան մէջ մտնողներին կապում է ինքնապաշտպանութեան ծրագիրը, և պատասխանատուութիւնը սահմանափակվում է միայն այն ծրագրով, որ կապել է մարդկանց մի կազմակերպութեան մէջ։ Գուցէ նրա մէջ գործողները բոլորովին տարբեր դաւանանքների և քաղաքական հայեացքների տէր մարդիկ են, բայց նրանք պայմանաւորվել են միմեանց հետ շաղկապվել միայն ինքնապաշտպանութեան գործում։

Իսկ դրանից դուրս նրանք կարող են դարձեալ միանալ կամ բաժանվել. դա դուրս է կազմակերպութիւնից և վերջինս պատասխանատու չէ զանազան անձերի և խմբերի ուրոյն դաւանանքների համար։

V

Մեր մէջ ինքնապաշտպանութեան գաղափարը միացրել է ազգի մեծագոյն մասը, եթէ ոչ բոլորին։ Եւ այդ գաղափարի իրագործութեան համար նա յանձն է առնում աշխատանք, զոհաբերութիւն և պատասխանատուութիւն։ Վաղեմի, Խաչէնի, Դարալագեազի, Զանգեզուրի հայ գիւղացին զոհում է իրան ինքնապաշտպանութեան գործի համար։ Նոյնպէս զոհում է իրան և թիւրքահայերի այն ստուար մասը, որը մասնակցում է ինքնապաշտպանութեան գործին։

Սակայն, երբ նոյն գիւղացիների և թիւրքահայերի առաջ դուք դնում էք ուրիշ ծրագիրներ, սոցիալական և քաղաքական յեղափոխութեան առաջարկներ, այն ժամանակ առաջ է գալիս երկպառակութիւն։ Մի մասը համաձայնում է ձեզ հետ և համակրութիւն է յայտնում գործելու այդ ուղղութեան։ իսկ միւսը հերքում է, բողոքում է և ընականաբար ամենևին չէ կամենում պատասխանատու լինել այն գործողութիւնների համար, որոնք դէմ են նրա հայեացքներին։

VI

Եթէ Վարանդայի գիւղացին պատրաստ է զոհել իրան իր ինքնապաշտպանութեան, իր լեզուի, իր դպրոցի, իր հողի համար, թող և զոհի իրան։ Բայց եթէ նա սարսափելի զրկանքների և զոհաբերութիւնների պէտք է ենթարկվի այնպիսի մի բանի համար, որի համար նա չէ ցանկանում զոհվել, ի՞նչ իրաւունքով մենք պէտք է նրան պատասխանատու դարձնենք։

Եթէ վարանդացին չէ ցանկանում իրան զոհել հասարակապետութիւն և ընդհանուր կոլեկտիվիզմ հաստատելու համար, եթէ նա չէ ցանկանում նոյն իսկ մի այնպիսի հաստատութիւն ունենալ ինչպէս էր հանգուցեալ Դուման, ի՞նչ իրաւունքով ես կարող եմ նրան զոհ դարձնել իմ քաղաքական ձգտումներին։

Ես կարող եմ քարոզել ժողովրդին և ժամանակի ընթացքում դարձնել համախոհ ինձ հետ, բայց ես իրաւունք չունեմ նրան պատասխանատու շինել այն քաղաքական դաւանանքի համար, որը նա չէ ընդունում։

VII

Եթէ մեր երկրում ապրող թիւրքահայերը չեն կամենում մասնակցել այն յեղափոխական շարժումների մէջ, որ մղում են Ռուսաստանում ապրող բոլոր ժողովուրդները և նրանց թւում հայերը, այդ իրանց գործն է, իրանց հաշիվն է։ Բայց այն մարդկանց, որոնք չեն ուզում ոչ մի դէպքում մասնակցել ռուսական գործերին, ի՞նչ իրաւունքով մենք կարող ենք նրանց պատասխանատու դարձնել այն գործերի համար, որոնց մէջ նրանք չեն մասնակցել կամաւ, որոշ դիտումներ և քաղաքականութիւն ունենալու պատճառով։

VIII

Ինքնապաշտպանը թող պատասխանատու լինի իր ինքնապաշտպանութեան համար, հայրենասէրը իր հայրենասիրութեան համար, սոցիալիստը իր սոցիալիստական դաղափարների համար, յեղափոխականը իր յեղափոխական արարքների համար։

Իսկ խառնել ամեն բան միասին և սոցիալիստին պատասխանատու շինել շովինիստի արարքների համար ու ինքնապաշտպան գիւղացուն հասարակապետութիւն պահանջող յեղափոխականի գործողութիւնների համար, անկարելի է։

Ամեն մի զոհ, զրկանք և պատիժ, որքան էլ ծանր լինի նա, դարձեալ կարելի է մի որոշ աստիճան հեշտութեամբ տանել, եթէ ժողովուրդը նախատեսել է իր արարքի պատասխանատուութիւնը. իսկ զուր նահատակ, էշի մարտիրոս լինել—դա չէ ցանկացել և չէ ցանկանում ժողովուրդը։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ալէքսանդրոպոլ, 12 հոկտեմբերի

Ամսս 9-ին գեներալ Լեվիցկին եկաւ Ալէքսանդրոպոլ և վերջին հրաժեշտը տուեց կարարդինեան գնդին։ Գեներալը դարձաւ զինուորներին հետեւեալ խօսքերով.—«Մեր աւուրը դուք էք, որ ինձ ձեզնից հեռացրին. ձեր շնորհիւ ես գեներալութեան աստիճանին արժանացայ, թէպէտ ինձ վաղուց էր արժան։ Շատ եմ ցաւում, որ ձեզնից հեռանում եմ. ձեր անունը ամեն տեղ բարձր է, ձեր շնորհիւ միայն Ղազախը հանդատացաւ. սկզբում, երբ գնացինք Ղազախ, հայ երեխաները կարծում էին թէ մենք էլ թուրքերի նման նրանց պէտք է կոտորենք, բայց յետոյ հասկացան, որ մենք գնացել ենք ոչ թէ նրանց կոտորելու, այլ պաշտպանելու, և այդ մեզ աջողվեց շնորհիւ ձեր եռանդուն գործունէութեան և ձեր լաւ վարքի, այն ինչ միւս գաւառներում կոտորածը դեռ շարունակվում է... Նորից կրկնում եմ, ոչ որի չը նեղացնէք. առհասարակ զինուորների մէջ վատ սովորութիւն կայ խմելուց լուցկի գնել կամ մի որևիցէ բան և սկանդալ սարքել, որպէս զի փող չը տայ, բայց լաւ իմացէք, որ այդ բոլորը նրանց փող է նստել, ձրի ոչինչ չը կայ։

«Ես վճռել էլ, որ բոլոր նորակոչ զինուորներին ծառայութեան մէջ արհեստներ սովորեցնեմ, այնպէս որ, երբ տուն գնաք, բոլորդ էլ մի-մի արհեստով պարապէք. «հողը քիչ է». Ռուսաստանի ազգաբնակութիւնը ամեն մի 25 տարուց յետոյ կրկնապատկվում է, իսկ հողի քանակութիւնը նոյնն է մնում. հող հերկելու և շատ արդիւնք ստանալու համար մի նոր խորամանկ ձև են գտել (кущеніе). այդ ձևը ես ուսումնասիրեցի և մտադիր էի ձեզնով այստեղ փորձեր անել, բայց դուք ինձ հեռացրիք...» Խօսքը վերջացնելուց յետոյ արտասուալից աչքերով հեռացաւ։

Պէտք է խոստովանել, որ գեներալ Լեվիցկու օրով հայ զինուորները ոչ մի ճնշում, նեղութիւն չէին կրում, «արմաշկա», «օշիհոնին» և սոյնանման բառերը խպտա վերացել էին. «ձեր յանցաւորին դուք դատեցէք և դուք պատժեցէք» յաճախ կրկնում էր Լեվիցկին հայ զինուորներին։

Ցունիսին արձակուրդ գնալիս Լեվիցկին 2 նամակ գրեց, մէկը Փոխարքային, միւսը տեղիս գարնիզոնի հրամանատարի վրա. 2 նամակումն էլ գովաբանում էր հայ զինուորներին, թէ դրանք ամենաատարիմ ծառայողներն են, դրանցից մեծ օգուտներ է քաղում զունը (այս ամառ զինուորները, մեծ մասամբ հայերը, շինեցին մի հիւանդանոց, 4 ճաշարան զինուորների համար, մի կլոբ օֆիցէրների համար, մի մեծ բասեյն լողանալու համար և այլն), բայց իշխանութիւնը դրանց հետ վարվելու ձևը չէ իմանում, սրանք էլ փախչում են, կամ կարդին չեն ծառայում»։ Լեվիցկին ընդունել է 20-րդ դիվիզիայի 2-րդ բրիգադան։

Աբ. Մամեանց

Սղնախ, 12 հոկտեմբերի

Երէկ, հոկտեմբերի 11-ին, երեկոյեան ժամը 8½-ին վերին հրապարակի վրա ատրճանակով վիրաւորվեց Սղնախի հարուրի՝ Բուդդան Տէր-Յովհաննիսեանը, որը ծառայում է տեղիս արքունի գանձարանում։ Գնդակը մտել է մէջքից և մնացել ներսը։ Վիրաւորվողի ցուցմունքով ձերբակալեցին երկու երիտասարդի, որոնցից մէկը հայ է, միւսը վրացի։

Ն. Ն.

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

—Հոկտեմբերի 1-ին, ինչպէս հաղորդում է «Страна» լրագիրը, անտառային ինստիտուտում առաջին անգամ կայացել է նոր կազմվող «ժողովրդական-աշխատաւոր» քաղաքական կուսակցութեան ժողովը, որի հիմնադիրներն են Պետական Դումայի Նախկին «աշխատաւորներից» մի քանիսը Տ. Ի. Սէդելնիկովի առաջնորդութեամբ։ Կուսակցութեան ծրագրի էութեան մասին զեկուցել է Սէդելնիկովը։ Կուսակցութեան գլխաւոր նը-պատակն է համախմբել «վարձուներից» զէպի ձախ գտնվող տարրերը։ Զեկուցումը տաք վիճաբանութիւններ է յարուցել։ Մանաւանդ խիստ կերպով հակաճառում էր զեկուցողին «ժողովրդական-սոցիալիստ»կուսակցութեան ներկայացուցիչ Մեսկոտինը, մատնացոյց անելով զեկուցման էական կէտերի անհիմն լինելը։ Ժողովը վերջացաւ առանց որևէ միջամտութեան ոստիկանութեան կողմից։

—Հոկտեմբերի 5-ին «հոկտեմբերի 17-ի միութեան» Պետերբուրգի կոմիտեի քարտուղարը միութեան գործերի պատճառով ներկայացել է մինիստրների խորհրդի Նախագահ Սաւոլիպինին։ Միութեան կենտրոնական կոմիտեոնը ուզում էր պարզել պրեմիէր-մինիստրի հայեցակէտը նահանգական ադմինիստրացիայի գործողութիւնների վերաբերմամբ, օրինակ, Կալուգայինը և Տամբինը, որոնք արգելել են հոկտեմբերի 17-ի միութեան տեղական կոմիտեոներին ժողովներ գումարել մինչև օրենականութիւն ստանալը (լեգալ ճանաչվելը)։ Միութիւնը ցանկանում էր նոյնպէս լսել Սաւոլիպինից պետական պաշտօնեաների հրատարակած շրջաբերականի ճիշտ իմաստը, որով արգելվում է պետական հաստատութիւնների մէջ ծառայողներին քաղաքական կուսակցութիւնների և միութիւնների անդամ լինել, մանաւանդ որ այդ շրջաբերականի հիման վրա արդէն եղել են դէպքեր, որ աստիճանաւորները հեռացել են հոկտեմբերի 17-ի միութիւնից։ Մինիստրների խորհրդի նախագահը միանգամայն որոշ պատասխաններ է տուել Միլլիուտինին (միութեան կոմիտեի քարտուղարին) այն կարևոր հարցերի վերաբերմամբ, որոնցով շահագրգռված են դեռ ևս լեգալ չը ճանաչված քաղաքական կուսակցութիւնները։ Սաւոլիպինը նահանգապետների գործողութիւնները, հոկտեմբերի 17-ի միութեանը ժողովներ անելը, մինչև լեգալ ճանաչվելը, չը թոյլատրելու համար, համարում է անպայման սխալ, որովհետև այդպիսի արգելքները հակասում են ռուս քաղաքացիների հիմնական իրաւունքին, այն է ժողովների ազատութեան։ Ապա Սաւոլիպինը խոստացել է, որ այսուհետև, մինչև կուսակցութեան լեգալ ճանաչվելը, չի արգելվի միութեանը ժողովներ անելու։ Ինչ վերաբերում է աստիճանաւորների մասին հրատարակված շրջաբերականին, հասարակութեան կողմից սխալ է հասկացված։ Շրջաբերականը արգելում է աստիճանաւորներին այնպիսի քաղաքական կուսակցութիւններին և միութիւններին մասնակցել, որոնց ծրագիրները հակառակ են կառավարութեան դիտաւորութիւններին և գործողութիւններին, բայց հոկտեմբերի 17-ի միութեանը պետական ծառայութեան մէջ եղող անձինք կարող են յարել։ («Страна»)

—«Խաղաղ վերանորոգութեան» կուսակցութեան օրինական ճանաչելը մերժվելուց յետոյ, կուսակցութեան Պետերբուրգի կենտրոնական կոմիտեոում կոմս Հէյդենին փոխարինող պ. Բայդակը ներկայացել է մինիստրների խորհրդի Նախագահ Սաւոլիպինին և բողոքել օրինականացնող ատեանի, մանաւանդ ատեանի Նախագահ՝ Պետերբուրգի քաղաքապետ Ֆօն-դեր-Լաուենիցի դէմ, կուսակցութեան խնդիրը քննելու ժամանակ թոյլ տրված վարմունքի համար։ Խնդիրը նրանումն է, որ Ֆօն-դեր-Լաուենիցը մերժելիս զեկավարվել է ոչ թէ կուսակցութեան կանոնագրութեամբ, ինչպէս այդ պահանջում է օրէնքը, այլ նրա ծրագրով, որի երկու կէտերը (ուղղակի ընտրութիւն Պետական Դումայի համար քաղաքներում և մասնաւոր հոգատարութեան պարտադիր խլումը), քաղաքապետի կարծիքով, դէմ են հիմնական օրէնքներին. բացի դրանից Լաուենիցը մերժել է լսել ատեանի անդամներից մէկի՝ քաղաքագլուխ Բէդցօվի բողոքը, լոգալ չը ճանաչելու համար։ Սաւոլիպինի համար այդ յայտարարութիւններից մի քանիսը նորութիւն էին, որովհետև նրան այդ գործի մասին զեկուցել էին այլ ձևով։ Հոկտեմբերի 8-ին Պետերբուրգ է եկել կոմս Հէյդենը և խաղաղ վերանորոգութեան կուսակցութիւնը արդէն աշխատում է փոխել տալ քաղաքապետի այդ կամայական որոշումը։

ՍԽԱԼՎՈՒՄ ԷՔ

«Մշակի» № 223-ում արած մեր յայտարարութիւնը, թէ այսուհետև «հայ պատրիոտներ» «Երկրի» հայհոյանքներին և զրպարտութիւններին մեր պատասխանը լինելու է և պէտք է այսուհետև միայն փաստական մերկացումներ տպենք, ձգել է մեր հայհոյիչներին և զրպարտիչներին մոլորութեան—ի հարկէ, դիտաւորեալ մոլորութեան—մէջ և նրանք շտապել են ցնծալ, ուրախանալ, թէ իբր մենք նահանջեցինք կռուից, թէ իբր մենք տեղի ենք տալիս։

Հարկ չը կայ ասել, որ «հայ պատրիոտների և պրոգրոմչիկների» այդ սև-հարիւրակային ցնծութիւնը գոնէ վաղաժամ է։ Երբէք մենք մտադիր չենք եղել և չենք՝ նահանջի կոչ անել։ Այն դատը, որ մենք պաշտպանում ենք, որի յաղթանակի համար մենք կռւում ենք, և կռւում ենք առանց վհատելու, յուսահատելու, այն խորին համոզմունքով, խղճմտանքի թելադրութեամբ, թէ այդ կռուի մէջ ամբողջ հայ ժողովուրդը, գոնէ հայ ժողովրդի գիտակից մասը և ամբողջ խնտելիգենցիան մեզ հետ է և համակրում, խրախուսում է մեզ (և դրան ապացոյց մեր ստացած բազմաթիւ նամակները, յօդուածները)—այնքան արդար դատ է, որ մենք ոչ մի ստիպ չունենք յետ նահանջել։ Նահանջը՝ ներկայ դէպքում փոքրոգութիւն, դասալքութիւն կը լինի և մենք երբէք մեր կեանքում փոքրոգութեան նշան ցոյց չենք տուել, թէև ներկայ դէպքում սպառնալիքներ, նոյն իսկ սպանութեան սպառնալիքներ, մենք ստանում ենք։

Եթէ մենք, խնայելով հայ մամուլը, ընթերցողին, յայտնել ենք, թէ հայհոյանքներին և զրպարտութիւններին չենք պատասխանելու, մի՞թէ դա նշանակում է թէ մենք նահանջում ենք։

Ոչ, մենք չենք նահանջի։

Ինչ որ մինչև այսօր «Մշակում» գրվել է, եղել են փաստեր, դատն, մերկ իրողութիւններ, որ դուք չէք կարողացել հերքել։ Մի՞թէ դուք կարողացաք հերքել Տեղ գիւղի զզուելի դէպքը. չէ՞ որ հէնց ինքներդ էք խոստովանում, ձեր թերթի նոյն համարում («Երկիր» № 12) որ, արդարև, Տէր-Սահակեանը 100 ր. տուգանքի է ենթարկել, որ հայ կինը ծեծվել է, միայն պատճառը ուրիշ բան էք յայտնում։ Եւ ով էր կատարել քննութիւնը՝ դուք։ Մի՞թէ դուք չէ՞ք, որ քննութիւնը կատարում է մեղադրվածը և այդպիսի քննութիւն կարող է ունենալ որևէ արժէք։ Հերքեցէք դուք Շուշուց գրված Դաշնակցականի նամակը՝ ձեր զզուելի սխրագործութիւնների մասին Վարանդայում։ Ոչ, դուք զաբրիական պապանձումն պահպանեցիք։ Գալով «Մուզանջուզ» գիւղի դէպքին, մենք ոչինչ չէ՞ պատասխանեցինք, որովհետև չէ՞ որ ժամանակ պէտք է քննելու համար։ Մենք ստացել ենք նամակը պօստով և հետևաբար մեր կողմից որևէ սուտի մասին խօսք լինել չէ կարող։

Իսկ զանգատները, ողբերը, դատն, աղի արտասուքով թրջված նամակները Դաշնակցութեան անունից կատարված շահատակութիւնների, հարստահարութիւնների, բռնութիւնների, բռնաբարումների դէմ շարունակում են տեղալ։ շատ տեղերում ժողովուրդը փառք է տալիս Թուրքերին և իւրայինների ձեռքից ազատվելու միակ միջոցը գտնում է՝ թողնել տուն, տեղ, օջախ և փախչել հեռու, հեռու, օտարութիւն։

Ոչ, դուք չը կարողացաք հերքել մեր ոչ մի մեղադրանքը։ Դուք միայն ծիծաղելի առարկութիւններ արիք, թէ մեր յայտարարութիւնը, որ դուք «կօնսպիրատիվ բիւրօկրատիա» էք ստեղծել, մատնութիւն է։ Ողորմելիներ, խղճուկ հայկական Գրենդմուսներ, Կրուշեվաններ։ Դուք ժատնութիւն էք անուանում այն, ինչ որ աբար աշխարհին յայտնի է, ինչ որ արեգակի պէս պարզ է։ Մենք ասել ենք, այժմ ևս կրկնում ենք, որ «բիւրօկրատիական կառավարութիւնը» ինքնրատնքեան զզուելի է, ևս առաւել զզուելի է «կօնսպիրատիվ բիւրօկրատիական կառավարութիւնը», որ դուք ստեղծել էք ռուսական բիւրօկրատիայի կողքին և խեղճ, թշուառ հայ ժողովուրդը երկուսի մէջտեղ տանջվում, հալվում է։

Դաւաճանը, մատնիչը նա է, ով դաւաճանում է ազգի, ժողովրդի գերագոյն շահերին, ով ձեռք է բարձրացնում ժողովրդական ազատութեան, խղճմտանքի, խօսքի, մտքի ազատութեան դէմ, ով կեղեքում, հարստահարում է ժողովուրդը։

Եւ հէնց դրա համար է, որ ձեզպէս դաւաճաններին, ժողովուրդը, փոխանակ սիրելու, թուրք աւազակներից վատթար է համարում։

Այժմ էլ, իբրև մի նոր վկայութիւն, իբրև մի նոր զօրավիգն ձեզ համար, առաջ եղ, քշել Լէօին և չը սպասելով մեր պատասխանին (Լէօի յօդուածը նոր տպվից) շտապում էք ուրախանալ, թէ մենք լռել ենք։

Ոչ, չենք լռել, սպասեցէք. ամեն մարդ իր արժանի պատասխանը կը ստանայ, ով և լինի նա։

Ոչ, սպասեցէք. թող հասարակութիւնը դատաւոր լինի մեր և Լէօի մէջ և ոչ դուք, երբ մենք ևս մեր ասելիքը կասենք, երբ մենք ևս ցոյց կը տանք ձեր նոր protegé պ. Լէօին, թէ ով է դաւաճանել Գ. Արծրունու սկզբունքներին, մենք, թէ նա, երբ ցոյց կը տանք, թէ որպիսի խղճուկ, ողորմելի դեր էր խաղում նա Էջմիածնի կենտրոնական ժողովում։

Ներկայումս Լէօն չէ վրդովվում, չէ յուզվում, շանթեր չէ արձակում, երբ տեսնում է հայ ժողովրդի դէմ գործած անօրինակ և քաղաքական բռնութիւնները. նա իր, իբրև հրապարակախօսի և գրողի, ձայնը չը բարձրացրեց այն դաշնագիտակները դէմ, որոնց դէմ նա դեռ անցեալ տարի փրփրալով էր խօսում, որոնց նա համարում էր հայ ժողովրդի ցեղեր, որոնց գործունէութիւնը նա սատակել վրդովվում էր մեր խմբագրութեան մէջ, նոյնիսկ օտար վկաների ներկայութեամբ. բայց այդ Լէօն այսօր ամբողջ սիւնակներ է նուիրում «Մշակի վարիչների դէմ, որոնց բոլոր յանցանքը այն է եղել, որ տասնեակ տարիների ընթացքում փայփայել, գուրգուրել, առաջ են քաշել նրան և տարել նրա ամեն տեսակ կպրիմները ու քմահաճոյքները։

Հ. Ա.

«ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔԸ»

(Գաղափարի զրպարտութիւնը)

Անհրաժեշտ ենք համարում նոր տեղեկութիւններ տալ այն քաղաքական կուսակցութեան մասին, որի առաջնակարգ դերակատարները մատնիչներ են։ Դրանց հմտութեամբ, եռանդով և մաւոր ոյժով, այն է ժողովրդական ազատութեան կուսակցութեան կամ, ինչպէս ասում են, «կադետների» մասին։

Այն ժամանակ, երբ սոցիալիստ իդէօլոգները «օղում կախված» էին հասարակ այդ «կադետներին», մեղադրում էին, որ նրանք «հող չունեն իրանց ոտների տակ», վերջիններս ժողովրդական գիտակցութիւնն էին նախապատրաստում և իրանց արմատները տարածում ժողովրդական մասսայի մէջ։ Սակայն նրանք այդ բոլորը կատարում էին համեստաբար, գործում էին լռիկ, առանց աղմուկի, առանց ռեկլամների։ Հոկտեմբերեան մանիֆեստից յետոյ, նրանք ապարդիւ էին մտել կազմակերպված ու պատրաստ ոյժով և այդ ոյժն էր գլխաւորապես, որ ազատվեց նրանց յաջթանակը ընտրութիւնների ժամանակ։

Սակայն ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը չէր զբաղված միայն կազմակերպական գործունէութեամբ։ Նա մշակում էր մի ընդարձակ ծրագիր իր քաղաքական հայեացքներն ու պահանջները, համապատասխան ժողովրդի իսկական շահերի, հանրամաշէջի ու հիմնաւոր դարձելու համար, որ ի հարկէ առանց գրականութեան անկարելի էր։ Այդ պատճառով նա ձեռնարկեց հրատարակչական գործունէութեան, որ նոյնպէս մեծ աջողութիւն ունեցաւ ու նախապատրաստեց ազդակութեան մթնոլորտ ու կարծիքներ իր կարիքներին վերաբերող որոշ հրատապ հարցերի ըմբռնողութեան համար։

Դժբաղդաբար նոյն կուսակցութեան կովկասեան ճիւղը շատ թոյլ զանվեց այդ գործում և կուսակցութեան հայեացքների ու նպատակների տարածման համար, համարեա, դրական ոչինչ չարեց Կովկասի ազգաբնակութեան մէջ։

Եչ ինչու զարմանալ, եթէ մեզանում գրական, դեռևսական ու հասարակական գործիչներով ամենահարուստ «ժողովրդական ազատութեան կուսակցութիւնն» մասին այն թիւր կարծիքն է տարածվում, որ նա «ազգաս է զրպարտութեամբ»։ Թէև դա անհեթեթութիւն է։ Առաջին հեղափոխութեան օրից սկսած ժողովրդական ազատութեան կուսակցութիւնը առել է մի շարք կարևոր խնդիրներ ու հարցեր լուսաբանող հանրամատչելի գրքոյկներ, որոնք մեզանում չեն տարածված։ Նա մեծ աջողութեամբ օգտվել է տպագրական մեքենայից իր քաղաքական պահանջները ժողովրդականացնելու համար։ Դա երևում է թէ իր հրատարակութիւնների տեսակներից և թէ կուսակցութեան օրգան «Вѣстникъ»-ի վերջին համարի մէջ դրանց տարածման մասին առաջ բերված պերճախօս փաստերից, որ քաղում ենք «Р. В.»-ից։

Կուսակցութիւնը իր տրամադրութեան տակ ունէր «ժողովրդական իրաւունք» անունով հրատարակչական պահեստը, որ իր գործունէութիւնը սկսեց անցեալ տարի հոկտեմբերամսի վերջերում, նախ շատ փոքր ծաւալով։ Նրա հրատարակած առաջին գրքոյկները հետեւեալներն էին։ «Անհնար ապատագրութիւնը», «Ինչ է դեմոկրատիա», «Ինչպէս է կառավարվում ժողովուրդը Ռուսաստանում»։ Կային և թերթիկներ. «Հոկտեմբերի 17-ի մանիֆեստը», «Նոյեմբերի 3-ի մանիֆեստը», «Մամուլի ազատութեան մասին»։ Դրանք ի հարկէ զանազան կուսակցութիւնների հրատարակութիւններից շատ էլ լաւ չէին, բայց և այնպէս սպառվեցին շատ շուտով։

Պահեստի սեպհականները ամսի գործունէութեան հաշիւը ցոյց է տալիս, որ բրօշիւրների առաջին համարները տարածվել են ութ ամսվայ ընթացքում 30,000 օրինակից մինչև 50,000 օրինակ։ Միևնոյն ժամանակ թերթիկներից էլ վաճառվել էին 94 հազարից մինչև 102 հազար օրինակներ։

Առաջին հրատարակութիւնների աջողութիւնը նպաստեց կուսակցութեան հրատարակչական գործունէութիւնը ընդարձակելուն, որը մանաւանդ զօրեղացաւ ընտրութիւնների ժամանակ։ Կուսակցութեան հրատարակութիւնների թիւը կարճ ժամանակամիջոցում 41-ի հասաւ։ Զը նայելով, որ նրանք կարճ ժամանակ է ինչ սկսել են տարածվել, այնուամենայնիւ տարածվել են բաւականին մեծ թիւով։ Հանգուցեալ Մ. Ե. Հերցենշտէյնի «Գիւղացիներին հարկաւոր է հողը» զրքոյկը, որ լոյս է տեսել ամենից ուշ, ամառը, արդէն վաճառվել է 20,000 օրինակից աւելի։ Լվովի «Ի՞նչ է ընտրողական իրաւունքը» տարածվել է 37,000 օրինակ, Կուրսանովի «Ի՞նչպէս էր կառավարվում ռուս ժողովուրդը հին ժամանակ» զրքոյկը տարածվել է 33,000 օրինակ, Եակուշկինի «Բեկարբիտները» 17,000 օրինակ, Կօկօշկինի «Շրջանային ինքնավարութիւնը և Ռուսաստանի մութիւնը» տարածվել է 53,000 օրինակ, «Զինուորականների և ժողովրդական կառավարութեան մասին» զրքոյկը տարածվել է 47,000 օրինակ, Լվովի «Պետական Դուման» զրքոյկը՝ 18,000 օրինակ և այլն։

Վերոյիշեալ զրքոյկները գրված են շատ հասարակ ոճով, յատկապէս ժողովրդի մէջ տարածելու համար։ Բայց կան զրքեր էլ, որոնք թէև հասարակ ժողովրդի համար գրված և ոճի ու գնի կողմից էլ մատչելի չեն, այնուամենայնիւ նրանք ևս տարածվել են ոչ պակաս աջողութեամբ։ Զ.-պրօվի «Սահմանադիր ռամկավար կուսակցութիւնը և ոցիալիզմ» զրքոյկը տարածվել է 10,000-ից աւելի օրինակ, Մ. Ե. Հերցենշտէյնի «Հողային բէֆօրմը մեր ժողովրդական ազատութեան կուսակցութեան ծրագրի մէջ» զրքոյկը՝ նոյնպէս 10,000 օրինակից աւելի։ Աւելի ընդարձակ է այն, որ Շերշենևիչի «Ազգարային հարցը», որ լոյս է տեսել համեմատաբար շատ ուշ, արդէն վաճառված է 42 հազար օրինակ։

Պէտք է նկատել, որ ժողովրդական ազատութեան կուսակցութեան հրատարակութիւնները առանձնապէս շատ մտաչելի են գիւղի կողմից։ Նրանց աջող տարածման պատճառը բացատրվում է իրանց չափազանց էժանութեամբ։ Ընդամենը վաճառված են 1,284,200 օրինակ զանազան տեսակի զրքոյկներ, որոնցից 1—3 կօպէկանոց զրքոյկները՝ 461 800 օրինակ, 4—5 կօպէկանոցները՝ 298,250 օրինակ, 6—10 կօպէկանոցները՝ 95,550 օրինակ և 10 կօպէկից աւելի արժեցողները՝ 23,600 օրինակ։ Բայց անկասկած է, որ ժողովրդական ազատութեան կուսակցութեան հրատարակութիւնների աջող տարածվելու պատճառը նրանց էժանութիւնն է։ Վերջին ժամանակներս լոյս տեսած Փրիվալինի «Ռուսաց պետութեան մուտքն ու ծանքը» զրքոյկը, որ արժէ 8 կօպէկ, տարածվել է արդէն 10 հազար օրինակից աւելի։ «Հրչանները Ռուսաստանում», արժէ 6 կօպէկ, տարածվել է 20 հազարից աւելի։ Սակայն ամենից աւելի աչքի ընկնող է այդ կողմից պրոֆ. Շերշենևիչի, ինչպէս յիշեցի, «Ազգարային հարցը» զրքոյկը։

Իր գործունէութեան համեմատաբար կարճ ժամանակամիջոցում կուսակցութիւնը կարողացաւ լայն չափերով տարածել իր ծրագիրը, այն էլ ամենահասարակ արտայայտված ձևով։ Այդ ուղղութեամբ նա տուել է մի քանի զրքոյկներ. «Գիւղացիներին և բանւորներին սահմանադիր ռամկավար կուսակցութեան մասին» տարածվել է 21 հազար օրինակ։ Պրոֆ. Շերշենևիչի մի ուրիշ զրքոյկը «Ժողովրդական ազատութեան կուսակցութեան ծրագիրը հանրամատչելի լեզուով», գինը 5 կօպէկ է, բայց տարածվել է 40 հազար օրինակ։ Այս վերջին զրքոյկը արդարև վերին տատիճանի պարզ է ու ըմբռնելի հասարակ ժողովրդի համար և աջող տարածման պատճառը հէնց այդ առաւելութիւնն է։ Պէտք է այս ևս նկատել, որ դրանցից 14 զրքոյկ արդէն լոյս են տեսել երկրորդ հրատարակութեամբ։

Ժողովրդական ազատութեան կուսակցութեան գրականութիւնը տարածվում էր մասամբ գրավաճառների միջոցով, բայց մեծաւ մասամբ կուսակցութեան տեղական կազմակերպութիւնների կոմիտէների միջոցով։ Վերջիններս կուսակցութեան հրատարակութիւններից գնել են 13,463 բուրբ ազգաբնութեամբ զրքեր, իսկ գրավաճառները՝ 10,000-ից աւելի։ Կուսակցութեան բոլոր կոմիտէները հասասարապէս գնել են միջին թիւով 200—300 բուրբոյ զրքեր, այնպէս որ հասասարապէս տարածվել են այդ հրատարակութիւնները իւրաքանչիւր շրջանում և մուտք են գործել երկրի ամենահեռաւոր և խուլ անկիւններն անգամ։

Այդպիսով սահմանադիր ռամկավար կուսակցութեան «ժողովրդական իրաւունքը» հրատարակչական ոլորտում աշխատում է լոյս սփռել մի շարք քաղաքական, Ռուսաստանի ժողովրդի համար, կարևոր հարցերի վրա, որոշում է ժողովրդական ազատութեան կուսակցութեան դերը և նրա հայեացքները հասարակական զանազան հարցերի վերաբերմամբ և ապա այդ բոլոր հարցերը լուծում է կուսակցութեան ծրագրի համաձայն, պատասխանատուութեան զգացմունքով, լրջօրէն, առանց աւելորդ ու փքուն խօսքերի, ընթերցողի հետ խօսելու պարզ ու հասկանալի լեզուով։

ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԴԱՒԱՌՈՒՄ

(Զիւանշիրի դաւառից)

Հոկտեմբերի 3-ին

Անցեալ թղթակցութիւններից մէկում գրել էի, ի միջի այլոց, որ ներկայ տարվայ մայիս ձայնագրութիւններ։ «Թաքի-գրման դ. տարտ ամսի վերջին թուերից սկսած մինչև այսօր մեր «ինչերը» մղած պրպտումնգամբ, ինչ-որ կայ ամբոխը խելագարի նման զոռում է՝ «գպրոց չենք ուզում, մեզ ուսում պէտք չէ»։ Իսկ մի քանի հարիւր մանուկներ փողոցում ճնացած ընդօրինակում են ծնողների «թաքի յարգութիւնները»... Այո, ընդօրինակում են։

Սրանից մի քանի օր առաջ էր, որ Իւվա գիւղի դպրոցի (այժմ փակ) մի 14 տարեկան աշակերտ՝ Գեղամ Սարգսեան, իր սրիկայ խաղընկերոջ մի քարի հարուածին զոհ գնաց։ Ասում են, որ այդ անմեղը թայֆայականութեան զոհ էր... Անկասկած եթէ Իւվայի դպրոցը փակ չը լինէր, չէր լինի և այդ անմեղ զոհը։ Պառաառաբանում են գիւղացիք, թէ մեզ չունենք ուսուցարան բաց անելու, ուսուցիչ պահելու։ Եթէ հարցնելու լինէք պառաառանող գիւղացուն, արդիօք տարվայ մէջ մի վեղրօ օղի գործածում ես, այդ նոյն հարցից կը վերաւորվի գիւղացու ինքնասիրութիւնը, որովհետև նա կասի քեզ, որ տասը վեղրօ և աւելի է գործածում, իսկ իր երեխայի ուսման համար ոչ մի կօպէկ չի ուզենայ տալ, որովհետև այդ նրանց «դասաբաշու» տրամադրութիւնն է։

Կայր թայֆայականութեան զոհ եղած մարդիկ...

Ողորմելի ժողովուրդ։

Ս. Տէր-Թովմասեան

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՈՒԼԱԲԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Մենք ունեցանք պ. Ալէքսանդր Ուլարի հետ տեսնվել մի երկրորդ անգամ պ. Ա. Մելիք-Ազարեանի տանը։ Այս անգամ նա իր տիկնոջ հետ էր, որը, կարիք ենք համարում ասել, հակառակ սովորական ֆրանսուհուն յատուկ բնաւորութեան, նոյնպէս շատ հետաքրքրվում է քաղաքական գործերով, շատ ուշով հետեւում է մեր երկրում կատարվող անցքերին և սիրով է մասնակցում այդ նիւթի մասին եղած խօսակցութիւններին։

Մի խումբ մարդիկ խօսին շրջապատում ենք հազուագիւտ հիւրերին և զանազան հարցերի մի ամբողջ տարափ ենք թափում նրանց առաջ։ Թէ տիկին և թէ պ. Ուլարը բոլորովին չեն խոստանում մեր հարցասիրութեան պատասխանել. ընդհակառակը, նրանք մեծ սիրով և ամեն կերպ աշխատում են մեր հարցասիրութեանը գոհացում տալ։

Բայց ամենից առաջ նրանք հետաքրքրվում են իրանց երկրի՝ Ֆրանսիայի գործերով և ուզում են վերջին հեռագիրներից տեղեկանալ, թէ ինչպէս է կազմվել նոր մինիստրութիւնը։ Կարդալովկիմանասցի մինիստրական կազմի մէջ մտած անձանց անունների ցանկը և այնտեղ տեսնելով Պիկարի, Պիշոնի, Բրիանի և այլոց անունները, նրանք շատ գոհ են մնում, յայտնելով որ այդ բոլորը իրանց անձնական ծանօթ բարեկամներն են։ Մասնաւորապէս նրանք ուրախանում են Պիկարի համար։

—Այր գիտէք,—բացատրում է մեզ պ. Ուլարը,—սա այն Պիկարն է, որը այնչափ հաղթանդամների ենթարկվեց Դրեյֆուսի հռչակաւոր գործի ժամանակ։ Նա պաշտպանեց զրվեցի և համարեա թէ արտաքսվածի էր մատնված, բայց երբ, վերջապէս, մեր կուսակցութեան ջանքերով արդարութիւնը վերականգնեց և ազատեցաւ նրան նոր գործերի մէջ մտնելուց, նրան նորից իր զինուորական պաշտօնը վերադարձնց, որից յետոյ շատ շուտով գեներալի աստիճան տրվեց, իսկ այսօր էլ, հազիւ 48—49 տարեկան հասակում, նա մինիստրական պօրտֆէլ է ստանում։ Եւ, իսկապէս, Պիկարը միանգամայն արժանի է այդ պաշտօնին։ Նա շատ ընդունակ և կարող անձնուրութիւն է։ Բացի դրանից, պէտք է չը մոռանալ, որ նա միևնոյն ժամանակ շատ մաքուր, ազնիւ և արդարադատ մարդ է։

Պ. Ուլարը մի քանի ուղղումներ էլ է անում հեռագրական գործակալութեան հաղորդած անունների մէջ։ Օրինակի համար, հեռագրի մէջ տրված է մի ինչ որ Սմօտրու անունը, այնինչ այդպիսի ֆրանսիական անուն բոլորովին գոյութիւն չունի։ «Դա անպատճառ Բարտու լինելու է», ասում է մեզ Ուլարը։ Կայ այնտեղ նոյնպէս մի ինչ որ Միլիվիկրուան անուն, որ պէտք է լինի Միլէ Լաբրուա, իսկ Դումերգի փոխարէն հեռագրում արված է Դումէրի անունը, որ բոլորովին տարբեր անձաւորութիւն է և օպօզիտիոնների կուսակցութեանն է պատկանում։

Մենք շուտով անցնում ենք մեր արտին ածելի մտոցի խնդիրներին։

—Գիտէք, պ. Ուլար,—ասում է խօսակիցներից մէկը,—Սաօլիպինի հետ ձեր ունեցած ինտերվիան արդէն լոյս է տեսել և մինչև իսկ թարգմանվել է մեր թերթերում։

—Մեթէ։ Սաօլիպինը, անշուշտ կը կատաղի։ Բայց ոչինչ. ես նրան ասել էի, թէ պիտի հրատարակեմ մեր ունեցած խօսակցութիւնը։ Առաջին անգամ նա ինձ խնդրեց լռութիւն պահել, բայց երկրորդ անգամին յայտնեց, որ ոչինչ դէմ չի ունենայ, եթէ մամուլին ասամ մեր ինտերվիւնը։ Եթէ կուզէք, ես նրա մօտ ոչ թէ սովորական ինտերվիւի համար էի գնացել, այլ ուղղակի վիճաբանելու համար։ «Իսկական ռուս մարդկանց» կուսակցութիւնը ավաշքարա մի մեծ պրոցամ է պատրաստում Վարշաւա, որ կամենում են իրականացնել ամենաուշը մինչև ամսոյս 17-ը, իսկ Սաօլիպինը այդ մասին գիտէ և ոչինչ չէ ձեռնարկում դրա առաջը առնելու, ասելով թէ ինքը միանգամայն անզօր է։ Ահա հէնց այդ խնդրի համար ես գնացի նրա մօտ յայտնելու, որ, եթէ ինքը անզօր է պօլիցիայի առաջը առնելու, այն ժամանակ ես օգնութեան կը կանչեմ ամբողջ Եւրոպայի հասարակաց կարծիքը, որը, կարծում եմ, աւելի զօրաւոր կը լինի, քան Սաօլիպինի մինիստրութիւնը։

«Զէք կարող երեակայել, թէ որքան անհեթեթ առարկութիւններ էր նա անում իմ առաջարկներին։ Օրինակի համար, ես հարցնում եմ նրան, թէ ինչու նա չէ տեղափոխում Վարշաւայում եղած այն երկու վաշտ զօրքը, որ կատարել խուլիգաններից էն կազմված և պօգրոմ կազմակերպողների ամենագլխաւորներն են։ Պ. մինիստրը ինձ ինչպատասխանի, որ լաւ լինի։ Ես ասում է, որ այդ բանը նա չէ կարող անել։ Երեք գլխաւոր պատճառներով։ «Եւ այն,—ասաց նա,—որ փող չունենք, իսկ այդ փոխադրութիւնը մի երկու միլիոն կը պահանջէ։ Երկրորդ՝ մենք չենք ուզում դրամական ամենամը վրա ենք դած մեր մոբիլիզացիան բանդել և երրորդ՝ կարող էք հասասացած լինել պ. Ուլարը, որ եթէ մենք այդ երկու վաշտը տեղափոխենք ու նրանց տեղը բոլորովին նոր վաշտեր բերենք, շատ ժամանակ չի անցնի, որ այդ նոր զօրքն էլ նոյն ոգին ու տրամադրութիւնը կը ստանայ, ինչ որ ներկայումս եղողներն են»։

Այս վերջին խօսքերի տակից մենք հարցական նայում ենք պ. Ուլարի երեսին, և նա շարունակում է։

—Այո, դա շատ հասկանալի է, որովհետև «պատրիոտների» կուսակցութիւնը օր ու գիշեր այնպիսի եռանդով է աշխատում և պրոպագանդ անում զօրքի մէջ, որ բոլորովին զարմանալի չի լինի, եթէ ամենապաղ զօրքն էլ կարճ ժամանակից մոլեռանդ պոգրոմչիկ դառնայ։

—Բայց անցեալ անգամ չէ՞ որ դուք ասացիք, որ Սաօլիպինը մաքառում է և «իսկական ռուս մարդկանց» կուսակցութեան դէմ։ Արդ՝ ինչպէս է նա թոյլ տալիս, որ դրանք այդպէս ափաշքարա պօգրոմներ պատրաստեն։

—Այո, նա մաքառում է, հրամաններ է արձակում, բայց նրա վրա ուշադրութիւն դարձնող չը կայ։ Երևակայեցէք, Վարշաւայի գեներալ-նահանգապետ Սկալօնը հիանդ պառկած է. նա անկարող է որևէ գործի խառնվել, իսկ նրա փոխարէն ամեն ինչ զեկավարում է նրա ծերունի մայրը, որը մի ֆանատիկ «պատրիոտ» է։ Սաօլիպինի ուղարկած կարգադրութիւններն էլ մայրն է բաց անում և կարդում ու իր ուզածի պէս էլ վարվում է նրանց հետ։

—Իսկ ինչպէս են վերաբերվում Սաօլիպինը և առհասարակ կառավարութիւնը դէպի առաջիկայ Պետական Դումայի ընտրութիւնները։

—Նրանք չափազանց անտարբեր են այդ ընտրութիւնների վերաբերեալ և չեն ուզում բոլորովին խառնվել այդ գործին։ Կառավարութեան համար բոլորովին միևնոյն է, թէ որ կուսակցութիւնը յաղթող կը հանդիսանայ ընտրութիւններին։ Սաօլիպինը այդ մասին ինձ բան առ բան հետեւեալը ասաց.

«Մեր երկիրը պարլամենտական երկիր չէ, որպէս զի կառավարութիւնը ցանկութիւն ունենայ կամ ձգտի մի որևէ կուսակցութեան վրա յենվել և նրա հետ ընթանալ։ Մեզանում կառավարութիւնը միայն Ցարի կառավարութիւն է և նրա վրա է միայն յենվում։ Պետական Դուման մեզ հարկաւոր է նրա համար միայն, որ կառավարութեան մշակած օրէնքները վաւերացնի ու նրանց սանկցիա տայ։ Եթէ մենք հիմա մի որևէ քաղաքական կուսակցութեան վրա յենվենք ու նրա հետ ընթանանք, այն ժամանակ մենք այդպիսով պարլամենտական դրութիւնը պաշտօնապէս վաւերացրած կը լինենք, այն ինչ դա մեզ բոլորովին ցանկալի չէ և մեր սկզբունքներին միանգամայն հակառակ։ Եթէ ապագայ Պետական Դուման դարձեալ իր մեծամասնութեամբ օպոզիցիայից կազմված լինի, մենք նրան դարձեալ կը ցրենք և այս անգամ հաստատական է, որ ընտրողական իրաւունքին վերաբերեալ օրէնքներն էլ արմատական փոփոխութեան ենթարկենք։»

—Կը նշանակէ՝ կառավարութիւնը բացարձակ կերպով խաղ է խաղում իր այս ընտրութիւններով։

—Սակայն ինչ տարբերութիւն կայ ներկայ մինիստրութեան և «իսկական ռուս մարդկանց» կուսակցութեան քաղաքական ծրագրերի միջև։

—Եթէ կուզէք, համարեա թէ ոչ մի տարբերութիւն չը կայ սկզբունքային տեսակետից։ Գուցէ միակ տարբերութիւնը միմիայն հրաւերների հարցն է, որի վերաբերեալ «պատրիոտները» միանգամայն անդրդեւ են։ Նրանք ցանկանում են, օրինակի համար, որ եւրոպական բոլոր պետութիւնները մի կոնֆերենցիա գումարեն և ընդհանուր հանանութեամբ Աֆրիկայում կամ մի այլ տեղ մի ընդարձակ երկիր դնեն, թէկուզ դա մի քանի միլիարդներ արժենայ, և եւրոպայի բոլոր հրվաներին վանեն այդ երկիրը։ Իսկ եթէ այդ գրանիզ ու ցնորամիտ ծրագիրը իրականութիւն չը ստանայ, այն ժամանակ «պատրիոտները», երբ կառավարութեան զեկը իրանց ձեռքը անցնի, մտածում են հրվանների զրկել ամեն տեսակ իրաւունքներից ու նրանց հետ վարվել իրբև օտարազգիների հետ, այնպիսի օտարազգիների, որոնք և ոչ մի պետութիւնից չեն կարող պաշտպանութիւն ստանալ։

«Սաօլիպինը հրվանների վերաբերեալ բոլորովին անտարբեր չէ։ Այդ կարող էք դատել նրա հետեւեալ խօսքերից, որ ինձ ասաց մեր տեսակցութեան ժամանակ. «Ի՞նչ կանէինք ես և դուք, պ. Ուլար, եթէ հրվանները լինէին ոչ այնպիսի պրոպրիօմների ենթարկվէին, ինչպէս այժմ են ենթարկվում։ Մեթէ մենք էլ բոմբեր չենք շինի ու բոմբերով չենք պատասխանի մեզ հալածողներին։

«Ինչ վերաբերում է կառավարչական կազմի և Պետական Դումայի մասին ունեցած ծրագրին, նրանք ոչնչով չեն տարբերվում միմեանցից։ Թէ Սաօլիպինը և «պատրիոտները» կուսակցութիւնը միանգամայն հակառակ են Պետական Դումային և ներկայ ընտրողական օրէնքներին։ Ամենայնդեպ, նրանք կուզային ունենալ մի «Զեմսկի սօբոր», ընտրված դասային (сословный) ներկայացուցիչներից, որը ամբողջ Ռուսաստանի կողմից սուլերէն կերպով նանկցիա տար կառավարութեան բոլոր գործողութիւններին։

—Բայց մեթէ, պ. Ուլար, դուք հաւատում էք, որ այդ կուսակցութիւնը կարող է աջողութիւն ունենալ և իր այդ ծրագիրները իրագործել։

—Բոլորովին ոչ։ Ես ուզեցի միայն ձեզ աւելի մօտիկից ծանօթացնել այդ խուլիգանների հետ. սեր ձեր երկրի գործերի մասին դուք էլ շատ բան չէք իմանում։ Այդ կուսակցութեան ղեկավարները այնպիսի ուղղներ են, որ դուք երևակայել անգամ չէք կարող։ Բացի դրանից, նրանց հետեւողներն էլ այնպիսի աւազակներ են։ Օրինակի համար, նոյնը Սմօտրու անունը, այնինչ այդպիսի ֆրանսիական անուն բոլորովին գոյութիւն չունի։ «Դա անպատճառ Բարտու լինելու է», ասում է մեզ Ուլարը։ Կայ այնտեղ նոյնպէս մի ինչ որ Միլիվիկրուան անուն, որ պէտք է լինի Միլէ Լաբրուա, իսկ Դումերգի փոխարէն հեռագրում արված է Դումէրի անունը, որ բոլորովին տարբեր անձաւորութիւն է և օպօզիտիոնների կուսակցութեանն է պատկանում։

Մենք շուտով անցնում ենք մեր արտին ածելի մտոցի խնդիրներին։

—Գիտէք, պ. Ուլար,—ասում է խօսակիցներից մէկը,—Սաօլիպինի հետ ձեր ունեցած ինտերվիան արդէն լոյս է տեսել և մինչև իսկ թարգմանվել է մեր թերթերում։

—Մեթէ։ Սաօլիպինը, անշուշտ կը կատաղի։ Բայց ոչինչ. ես նրան ասել էի, թէ պիտի հրատարակեմ մեր ունեցած խօսակցութիւնը։ Առաջին անգամ նա ինձ խնդրեց լռութիւն պահել, բայց երկրորդ անգամին յայտնեց, որ ոչինչ դէմ չի ունենայ, եթէ մամուլին ասամ մեր ինտերվիւնը։ Եթէ կուզէք, ես նրա մօտ ոչ թէ սովորական ինտերվիւի համար էի գնացել, այլ ուղղակի վիճաբանելու համար։ «Իսկական ռուս մարդկանց» կուսակցութիւնը ավաշքարա մի մեծ պրոցամ է պատրաստում Վարշաւա, որ կամենում են իրականացնել ամենաուշը մինչև ամսոյս 17-ը, իսկ Սաօլիպինը այդ մասին գիտէ և ոչինչ չէ ձեռնարկում դրա առաջը առնելու, ասելով թէ ինքը միանգամայն անզօր է։ Ահա հէնց այդ խնդրի համար ես գնացի նրա մօտ յայտնելու, որ, եթէ ինքը անզօր է պօլիցիայի առաջը առնելու, այն ժամանակ ես օգնութեան կը կանչեմ ամբողջ Եւրոպայի հասարակաց կարծիքը, որը, կարծում եմ, աւելի զօրաւոր կը լինի, քան Սաօլիպինի մինիստրութիւնը։

«Զէք կարող երեակայել, թէ որքան անհեթեթ առարկութիւններ էր նա անում իմ առաջարկներին։ Օրինակի համար, ես հարցնում եմ նրան, թէ ինչու նա չէ տեղափոխում Վարշաւայում եղած այն երկու վաշտ զօրքը, որ կատարել խուլիգաններից էն կազմված և պօգրոմ կազմակերպողների ամենագլխաւորներն են։ Պ. մինիստրը ինձ ինչպատասխանի, որ լաւ լինի։ Ես ասում է, որ այդ բանը նա չէ կարող անել։ Երեք գլխաւոր պատճառներով։ «Եւ այն,—ասաց նա,—որ փող չունենք, իսկ այդ փոխադրութիւնը մի երկու միլիոն կը պահանջէ։ Երկրորդ՝ մենք չենք ուզում դրամական ամենամը վրա ենք դած մեր մոբիլիզացիան բանդել և երրորդ՝ կարող էք հասասացած լինել պ. Ուլարը, որ

ռաջարկվեցին մի քանի կենացներ, արվեցին փոխադարձ բարեմաղթութիւններ։ Իսկ ճաշից յետոյ խօսակցութիւնը աւելի ու աւելի մտերմական բնաւորութիւն ստացաւ, որը, ի հարկէ, չէ կարող մամուլի նիւթ լինել։

Մեկնելիս բաժանվելով, պ. Ուլարը յայտնեց, որ հէնց նոյն երեկոյին ինքը տիկնոջ հետ գնալու է Գուրիայիս, «այնտեղի աւերակները տեսնելու համար»...։

Ռ.

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՓՈԽԱՐՔԱՅՈՒԹԻՒՆԸ

«Օրէնքների ժողովածու»-ի մէջ հրատարակված է բարձրագոյն անուանական մի ուկազ, որի հիման վրա էական սահմանափակման ենթարկվեց Կովկասի Փոխարքայի իշխանութիւնը, այսինքն «Կովկասի պետա.-հեռագրական հասատատութիւնների անօրինութիւնը, ինչպէս նրանց կազմի, այնպէս և մնացած բոլոր կէտերի վերաբերմամբ», յանձնված է նեբքին գործերի մինիստրութեան անմիջական հսկողութեան։

Ըստ երևոյթին, այդ բէֆորմի պատճառն եղել է ցանկութիւնը՝ կառավարչութեան և հսկողութեան լիակատար միութիւն հաստատել այնպիսի մի ճիւղի մէջ, որը պատճառել է և կարող է պատճառել շատ հոգսեր մեր կառավարիչներին։ Զարմանալի չէ լինի, եթէ այդ նպատակով իսկ անհրաժեշտ կը համարեն խիստ կենտրոնացումն մտցնել և ուրիշ շրջաններում, այսպէս օրինակ երկաթուղային վարչութեան մէջ և այլն։

Վերոյիշեալ ակտի մէջ արտայայտված միտումը ցոյց է տալիս կրնի վրա յետադարձ դէպի այն կարգերը, որոնք տիրում էին Կովկասի փոխարքայութեան վերականգնումից առաջ, 1905 թուի սկիզբները։

Ընդհանրապէս, այդ պաշտօնը հաստատվեց առանց մտածելու, առանց որևէ սխեմի և առանց որևէ բարի հետեւանքների։

Մտադրութիւնը, գուցէ, կանոնաւոր էր.— մերձեցնել մեծ և բարդ ծայրերերի կառավարութիւնը նրա ազգաբնակութեան, ստեղծելով տեղում իշխանութիւն բարձր լիազօրութիւններով։ Բայց այդ խնդիրը լուծվեց ոչ թէ մեր օրերի հանգամանքներին համաձայնեցնելով, այլ օրէնսդրից վերցված հին թափանցիկ նկարների(տրաֆարէտ) հիման վրա։ Աւելի վատթարն այն էր, որ նեղութիւն չը կրեցին համաձայնեցնել նոր հաստատված պաշտօնի բնաւորութեան հետ Փոխարքայի իսկական իրաւունքները և նրա յարաբերութիւնները մինիստրների հետ։ Փոխարքային սարկական կախման դրութեան մէջ դրին իրանցից, շնորհիւ և փոխարքայութեան ժամանակ պահպանված եւլամի միութեան։ Մինիստրների խորհրդի բէֆորմի ժամանակ, սահմանադրական նոր կազմի հետ միասին, Փոխարքան չէր մտնում մինիստրութեան կազմի մէջ, իսկ Պետական Դումայի նիստերի օրով յայտնի չէր, ում արդեօք իսկապէս պէտք էր ուղղել Կովկասի գործերին վերաբերեալ հարցապնդումները։

Այդպիսի խճճուածքը չը կարողացաւ, ի հարկէ, նպաստել Կովկասի Փոխարքայ կոմս Վորոնցով-Դաշկովի գործունէութեան ազատ-քաղաքական աջողութիւններին։ Սկզբում, այն խոստումները, որ նա տուեց ազգաբնակութեան, թւում էր, անգամ լիազօրութիւնների շրջանակից դուրս չէին, բայց յետոյ խոստումները խոստումներ մնացին, իսկ լիազօրութիւնները բաւականաչափ ֆիկտիվ յայտնվեցին դէպս անպատուղ դուրս եկան։

Կովկասը անցրեց միայն հիասթափութիւններ մէկը միւսի ետևից, կատաստրոֆա կատաստր

ձուներին՝ անարդար կը լինէր. իսկական պատճառը, որի համար մեր դպրոցները ուսուցչական կանոնաւոր և լրիւ խումբ ու տեսուչ չունին մինչև այսօր, շատ բազմազան է. անոնցմէ առանց մի այսպէս է։

Ներկայ ուսումնական չորսում դպրոցները տեղաւորված են երեք շէնութիւնների մէջ։ Դասարանները վերին սահմանի խճողված են, մինչև 60—65 հոգի տեղաւորվում են մի դասարանում, զբեթէ իրար վրա կուտակված. շէնութեան անյարմարութեան պատճառով մի դասատան աշակերտները տեղաւորում են երկու սենեակում, ուսուցիչը միաժամանակ երկուսում էլ պիտի պարապի միջի գուռը բաց թողնելով։ Դասարաններից մի քանիսը խիտ մութ են։ Առնասարակ անուշադրութեան ենթարկված մանկավարժական և առողջապահական անհրաժեշտ համարված շատ պայմաններ։ Այս բոլորի դէմ մի անիծեալ արդարացուցիչ պատճառ կայ—«Նախահաշիւը չէ թոյլ տալիս». մի պատճառ, որին երբէք կարեւորութիւն չեն տալիս մանկավարժական և դպրոցի օգտակարութեան պահանջները։

Այնքան հրամայական, այնքան սրբազան են դպրոցները իրանց կատարած դերով, որ երբէք ոչ մի պատճառով չէ կարելի խախտել նրանց կանոնաւորութիւնը. սանուանդ այն դէպքում, երբ դպրոցների նիւթական միջոցները թոյլ են տալիս լրիւ հրամայական պահանջի ձայնը։

Պէտք է համաձայնվինք սակայն, որ 20,000 հայ բնակչութեան երկու որդիներին չէ կարելի տեղաւորել 25 սենեակներում. պէտք է համաձայնենք սակայն, իր այդքան ընդարձակ և դժուարին գործը կենտրոնացնել մի հոգարձութեան ձեռքում բոլորովին սխալ քայլ է, երբ նամանաւանդ այդ հոգարարձութիւնը առաջին անգամն է իր վրա առել մի վերին սահմանի ճնշող, իր ընդարձակութեամբ և պահանջներով պատասխանատու գործ։ Ուրիշ տեղերում գուցէ ցանկալի չը համարվի ըստ ամենայնի սկզբունքը, բայց մեր տեղում այդ ուղղակի անհրաժեշտ է, որովհետև չափազանց դժուար է վարել 30 հոգուց բաղկացած խմբի, 25-27 դասարանի և հազարաւոր աշակերտների համախմբված մի մեծ կազմակերպութեան ներդաշնակութիւնը. դա ամեն տեսակէտով բացառելի հանդամանք է մեր միջավայրում։ Եւ պակասութիւնները, խոշոր պակասութիւններ, որոնք յիշվեցին վերևի տողերում, մեր ասածն են հաստատում։

Գուցէ կարելի լինի հաշուել բոլոր հակամանկավարժական կարգադրութիւնները, դպրոցների դռները նորեկների առաջ փակելու նման անարգոր որոշումների հետ մինչև անգամ, ենթադրելով, որ ամեն մի գործի սկզբնաւորութիւնը, մանաւանդ այսպիսի խոշոր գործի սկզբնաւորութիւնը միշտ կապված կը լինի նոյնքան խոշոր սխալների հետ. ընդունում ենք, այս յաճախ կրկնվող երևոյթը սովորական է մեր միջավայրի համար. սակայն, միւս կողմից, չը մոռանանք, որ մեզանում շատ անգամ սխալն աւելի է, քան ուղիղը, որ այդ սխալը սպրդում է և այնպիսի տեղերում, ուր երբէք հնար չը պիտի լիներ մտնելու։ Հոգաբարձութիւնը կարող է ճնշված լինել «ծախահաշիւը թոյլ չէ տալիս»-ից և հեշտութեամբ սխալվել մանկավարժական-ուսումնական խնդիրներում. իսկ հաշուել այդ սխալների հետ թեթևութեամբ... այս արդէն ծանր թեթևութիւն է, ծանր սխալ է։

